ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի <<Գայի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ 5 դաստիարակի՝ 0,585 դրույքաչափով, երաժշտական դաստիարակի՝ 1 դրույքաչափով և մեթոդիստի՝ 0,5 դրույքաչափով, թափուր պաշտոնները համալրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել ԿԳՄՍ նախարարի 2024թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆավորակավորման պահանջներին համապատասխանող անձիք:

Վերոհիշյալ պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1. դիմում (Ձև 1)
2. կրթության մասին փաստաթուղթ՝ դիպլոմ
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ
5. ինքնակենսագրություն ՝ Ձև 4
6. լուսանկար 3x4չափի
7. այլ պետության քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են զինվորական գրքույկ,կամ զինվորական կցագրման վկայական:
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)
10. որակավորման տարակարգ(առկայության դեպքում)

Փաստաթղթերի պատճենները անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00ից - 16:00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կանցկացվի 2026 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը՝ 14:00-ին, <<Գայի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքում /գ. Գայ ,Իսահակյան 1 փ ,թիվ 16/1/

Տեղեկությունների համար զանգահարել 077-288-057 հեռախոսահամարով: